ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
<<ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0040,ք Երևան, Ավան, Աճառյան 1
Հեռ./Тел./Tel. (+374) 60 691000
Ֆաքս/Факс/Fax (+374) 28
Էլ. փոստ / E-mail: info@cmsa.am

15 հունիս 2017 թ.

Հարգելի գործընկեր

2017 թվականի հոկտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան կազմակերպում է միջբուհական ուսանողական գիտաժողով նվիրված աղետների ռիսկերի նվազեցման միջազգային օրվան «ԱՂԵՏՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» թեմայով:

Գիտաժողովը նպատակաուղղված է աղետների հոգեբանության հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծումների քննարկմանը, գիտական հետազոտությունների ներկայացմանը, արտակարգ իրավիճակների աշխատակիցների հոգեբանական պատրաստվածության բարձրացման մոդելների մշակմանը և բնակչության շրջանում հոգեբանական անվտանգության մշակույթի ձևավորմանը:

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտը մինչև 2017 թվականի օգոստոսի 15-ը և ուղարկել ակադեմիայի էլեկտրոնային փոստի հասցեին՝ info@cmsa.am:

Ներկայացվելիք զեկուցման ամբողջական տարբերակն անհրաժեշտ է մինչև սեպտեմբերի 10-ը էլեկտրոնային տարբերակով, սկանավորված կարծիքի հետ ուղարկել ակադեմիայի էլեկտրոնային փոստի հասցեին՝ info@cmsa.am, կամ ներկայացնել ակադեմիա (Երևան-40, Աճառյան 1, 2-րդ հարկ, 211 սենյակ, ՈՒԳԸ: Հեռախոս՝ 060-69-10-00, 060-69-10-03):

Գիտժողովին ներկայացված զեկուցումները կտպագրվեն:

Ակնկալում եմ Ձեր ակտիվ մասնակցությունը գիտաժողովին:

Կից ներկայացվում է գիտաժողովի կազմակերպման փաստաթղթերի փաթեթը:

Հարգանքով՝

Ռեկտոր, փ/ծ գեներալ-մայոր Հ. Մաթևոսյան

Կատարող՝ ՈՒԳԸ նախագահ՝ Ա. Գևորգյան
Հեռ. 060 69-10-03

ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝

ՆՎԻՐՎԱԾ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԵՄԱՅՈՎ

Հեղինակի անունը, ազգանունը և հայրանունը	
Հոդվածի վերնագիրը	
Հրատարակության ներկայացվող կազմակերպությունը, ամբիոնը (բուհ, ֆակուլտետ)	
Էլեկտրոնային փոստի հասցե	
Հեռախոսահամար (բջջային)	

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2017 թ.օգոստոսի 15-ն է:

Խմբագրական խորհուրդ

Հեռ. 060-69-10-00,

060-69-10-03.

info@cmsa.am

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդվածները կարելի է ներկայացնել հայերենով, ռուսերենով և այլ օտար լեզվով: Տեքստի տառատեսակը՝ յունիկոդ, տեքստի տառաչափը՝ 11, տողերի հեռավորությունը՝ 1.2, էջի ֆորմատը՝ A4 (210x297 մմ), աշխատանքային դաշտը՝ 165 x252 մմ, լուսանցքները. ձախից՝ 25 մմ, վերևից 20 մմ, աջից 15 մմ, ներքևից՝ 25 մմ:

Առաջին էջի վերին տողի մեջտեղում տրվում է հեղինակի (ների) Ա.Հ. Ազգանունը (ները) (փոքրատառ, bold, 11 տառաչափով): Մեկ տող ներքև, տողի մեջտեղում տրվում է հոդվածի վերնագիրը (գլխատառերով, bold, 12 տառաչափով), իսկ մեկ տող ներքև, հոդվածի տեքստի լեզվով՝ համառոտագիրը (аннотация), (որի մեջ պետք է ձևակերպվի հոդվածի նպատակը, արդյունքները և հիմնավորվի կատարված աշխատանքների անհրաժեշտությունը), 5-8 առանցքային բառերով (բոլորը՝ մինչև 10 տող ծավալով, շեղատառերով (*Italic*), 10 տառաչափով): Համառոտագրից մեկ տող ներքև, 11 տառաչափով տրվում է հոդվածի հիմնական տեքստը: Պարբերությունները սկսվում են նոր տողից՝ 10 մմ ներսից:

Նկարները և աղյուսակները տեղադրվում են տեքստում այդ մասին նշում կատարելուց հետո, նույն կամ հաջորդ էջում և պետք է ունենան վերնագրային բացատրություններ և համարակալում: Անվանումը և բացատրությունները տեղակայել նկարների տակը և աղյուսակների վրա (*Italic*, 9 տառաչափով):

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները տրվում են Microsoft Equation, Italic, 10 տառաչափով: Բանաձևերը ներկայացվում են առանձին տողով և մեջտեղում, իսկ հիմնականները նաև համարակալվում են նույն տողի աջ անկյունում՝ (փակագծերի մեջ):

Հոդվածում օգտագործվող գրական աղբյուրները պետք է ունենան օգտագործման հերթականությանը համապատասխան համարակալում և տեքստում նշվեն՝ [1], [2],...տեսքով:

Հոդվածի վերջնամասից երկու տող ներքև, մեջտեղում նշվում է Գրականություն արտահայտությունը (փոքրատառ, bold, 11 տառաչափով) և ըստ ընդունված ստանդարտի, 10 տառաչափով տրվում է գրականության ցանկը, որում հեղինակի (ների) Ազգանունը Ա.Հ.-ն կամ առաջին բառը ձևավորվում է bold-ով: Ցանկալի է գրականության ցանկում ընդգրկել մինչև 10 հրատարակում:

Գրականությունից հետո, երկու տող ներքև հոդվածի տեքստի հետ չհամընկնող երկու այլ լեզուներով նույն ձևով կրկնվում է հոդվածի գլխամասը՝ հեղինակի (ների) Ա.Հ. Ազգանունը (ները), հոդվածի վերնագիրը և համառոտագիրը:

Մեկ տող ներքև տրվում են հոդվածի հեղինակի Ազգանունը, Անունը, Հայրանունը, գիտ. աստիճանը, գիտ. կոչումը, կազմակերպության համառոտ անվանումը (փակագծերում) և հեռախոսների համարները:

Հոդվածի ընդհանուր ծավալը մինչև 10 էջ (ցանկալի է վերջին էջն օգտագործել ամբողջությամբ):

Չի թույլատրվում ներկայացնել նախկինում հրատարակված կամ տպագրության համար այլ հանդեսներ ուղարկած հոդվածներ:

Խորհրդի կողմից հրատարակման չերաշխավորելու դեպքում հոդվածը մնում է խմբագրությունում:

Խմբագրական խորհուրդ
Հեռ. 060-69-10-03,
info@cmsa.am